

4.2. Զբոսաշրջություն

4.2.1. Միջազգային զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2011թ. հունվար-դեկտեմբերին հանրապետություն են ժամանել 757935 զբոսաշրջիկներ¹ կամ 2010թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 10.3%: 2011թ. հունվար-դեկտեմբերին զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 714953 մարդ կամ 2010թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 10.2%:

¹Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջիկության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **միջազգային զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեն ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին: